

# **ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ**

**ԵՆԳԻԲԱՐՅԱՆ ԳՈՐ ՆՈՐԻԿԻ**

**ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ  
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ԺԲ. 00.02.-«Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական,  
մոլիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում»  
մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**Երևան-2012**

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ**

**ЕНГИБАРЯН ГОР НОРИКОВИЧ**

**ПРОБЛЕМЫ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ ГОСУДАРСТВЕННОЙ ТАЙНЫ  
В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

**АВТОРЕФЕРАТ**

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности  
12.00.02 - «Публичное право-конституционное, административное, финансовое,  
муниципальное, экологическое, европейское право, государственное управление».

**ЕРЕВАН-2012**

**Ասենախոսության թեման հաստատվել է  
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանում**

**Գիտական դեկավար՝**

իրավաբանական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Ա. Հ. Խաչատրյան

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

իրավաբանական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Գ. Բ. Դանիելյան

իրավաբանական գիտությունների թեկնածու  
Վ. Վ. Ռաֆայելյան

**Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ կառավարման ակադեմիա**

Ասենախոսության պաշտպանությունը տեղի է ունենալու 2012թ. դեկտեմբերի 6-ին  
 $14^{00}$ -ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավաբանության 001  
մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ասենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի  
գրադարանի գիտաշխատողների ընթերցարահում:

Սեղմագիրն առաքվել է 2012թ. նոյեմբերի 6-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
իրավ. գիտությունների թեկնածու, դոցենտ

Ա.Գ. Վաղարշյան

Тема диссертации утверждена в Армяно-Русском (Славянском) университете

Научный руководитель:

доктор юридических наук,  
профессор А. Г. Хачатрян

Официальные оппоненты:

доктор юридических наук,  
профессор Г. Б. Даниелян

кандидат юридических  
наук В. В. Рафаэлян

Ведущая организация: Академия управления РА

Зашита состоится 6-ого декабря 2012 г., в  $14^{00}$  часов на заседании специализированного совета ВАК-а 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алекса Манукиана 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 6-ого ноября 2012 г.

Ученый секретарь специализированного совета,  
кандидат юридических наук, доцент

Ա.Գ. Վագարշյան

**Թեմայի արդիականությունը:** Պետական գաղտնիքը պետական անկախության կարևոր հատկանիշներից է, ինքնիշխան պետականության պարտադիր տարրերից մեկը: Ունենալ պետական գաղտնիք՝ նշանակում է ունենալ այնպիսի պետություն, որը մտածում ու գործում է հանուն իր անվտանգության, որեմն և իր քաղաքացիների, հանրության կենսական կարևոր շահերի ապահովման: Ասվածը լիովին վերաբերվում է նաև Հայաստանի Հանրապետությանը:

Ակնհայտ է, որ ժողովրդավարական պետության ձևավորման ներկա պայմաններում, որոնցում ապրում է մեր հանրապետությունը, առաջնահերթ է դառնում պետական գաղտնիքի՝ քաղաքական ազդեցության և ազգային անվտանգության ապահովման այդ սուր գործիքի գիտակրավական գնահատականի խնդիրը: Ատենախոսության թեմայի ընտրությունը պայմանավորված է այս հանգամանքով:

Ատենախոսությունը ներառում է հանրապետությունում պետական գաղտնիքի իրավական կարգավորման հիմնախնդիրների լայն շրջագիծ: Նախ՝ պետությունը պարտավոր է իր վրա վերցնել տարրեր տեսակի տեղեկությունների պաշտպանության և գաղտնիքների սահմանակարգերի (ինստիտուտների) գործողության օրենսդրական հիմքի ստեղծման խնդիրը, որը բավականաչափ բարդ է և՝ քաղաքական, և՝ իրավական տեսանկյունից: Մի կողմից անհրաժեշտ է բավարարել ժամանակակից հասարակության պահանջմունքները՝ լինել բաց և մատչելի, ապահովել սահմանադրությամբ որպես բարձրագույն արժեք հոչակված մարդու իրավունքներն ու ազատությունները, մյուս կողմից՝ պետական գաղտնիք կազմող տեղեկությունների շրջանառության օրենսդրական կարգավորմամբ ապահովել անհատի, հասարակության և պետության անվտանգությունը: «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» 1996թ. դեկտեմբերի 3-ի ՀՀ օրենքի ընդունումը, ընդհանրապես՝ գաղտնիքին վերաբերող օրենսդրության ձևավորումը ուղղված են հենց այդ նպատակի իրականացմանը:

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի իրավակիրառ պրակտիկան, անշուշտ, Էապես առաջընթաց քայլ արձանագրեց իրավական պետության կայացման ճանապարհին: Այն բույլ տվեց գաղտնագերծել և շրջանառության մեջ դնել նախկինում գաղտնի համարվող տեղեկատվության մի հսկայական ծավալ և դրանով իսկ իրական նախադրյալներ ստեղծել ժամանակակից բաց հասարակության հաստատման, հասարակություն-պետություն իրավահարաբերությունների նորովի ձևավորման համար, մասնավորապես՝ մի կողմից ապահովել պետական իշխանության մարմինների և դրանց պաշտոնատար անձանց գործունեության որոշակի կողմերի մասին քաղաքացիների տեղեկացվածության սուրյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, մյուս կողմից՝ օրենքի դաշտ բերել այն իրավական կառուցակարգերը, որոնց հիման վրա պետությունը որոշակի խումբ տեղեկություններ դասում է պետական գաղտնիքի շարքը, սահմանում դրանց գաղտնագերծման կարգը և պայմանները, միաժամանակ՝ պատժամիջոցներն այնպիսի դեպքերում, երբ քաղաքացին պաշտպանվող տեղեկությունը տարածում է հակաօրինական ձևով: Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է այս իրողությունների տեսական արժեքում և իրավական հիմնավորման անհրաժեշտությամբ:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է ևս մեկ հանգամանքով. «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը գործում է շուրջ

մեկուկես տասնամյակ, այդ ընթացքում տեղի են ունեցել լուրջ փոփոխություններ ինչպես պետական, այնպես էլ հասարակական կյանքում, առաջ են եկել նոր իրողություններ, սակայն ինքը՝ օրենքը, դրան գուգընթաց չի կրել էական փոփոխություններ, ինչը չի կարելի ասել հանրապետությունում գործող շատ այլ օրենքների մասին։ Ասվածը բնավ չի վկայում այն մասին, թե իիշյալ օրենքը զերծ է թերություններից և լիովին համապատասխանում է ինչպես Հայաստանի Հանրապետությունում առկա նոր հասարակական և իրավագիտական իրողություններին, այնպես էլ այն միջազգային շափանիշներին, որոնք գործում են աշխարհի առաջավոր երկրներում։ Համեմատական-իրավական վերլուծությունը հեղինակին հնարավորություն է տվել առավել համակարգված ձևով գնահատել իիշյալ օրենքի և՝ արժանիքները, և՝ թերությունները, դրանք դիտարկել օրենսդրական գարգացման ընդհանուր միտումների մեջ, սահմանել այն նոր մոտեցումները, որոնք օգտակար են ինչպես պետական գաղտնիքի իրավագիտական հայեցակարգի գարգացման, այնպես էլ ոլորտին վերաբերող իրողությունների գործնական օրենսդրական կարգավորման համար։

Ընդգծելով թեմայի արդիականությունը՝ ատենախոսության մեջ վկայակոչվում է այն միտքը, որ «Հայաստանը կենսունակ պետություն չի դառնա, եթե չկարողանա բարձր գիտական մակարդակով վերլուծել իր ազգային անվտանգության բարդագույն խնդիրները։ Անվտանգության բնագավառում ինքնուրույն մտածելու մեր տակավին շատ թույլ կարողությունները և նույնիսկ անկարողությունը հայոց պետականությունը վտանգող ամենալուրջ սպառնալիքներից են<sup>1</sup>։ Հիշյալ «որակներին» ավելացվում են ինչպես անվտանգության բնագավառում, այնպես էլ իրավական համակարգում ընդհանրապես դեռևս առկա հնի իներցիան, մտածողության և աշխարհմբռնման կարծրատիպերը։ Մեծագույն մասով դա հետևանք է այն բանի, որ անցումային շրջան ապրող այնպիսի երկրում, ինչպիսին Հայաստանն է, «համակարգային փլուզումը դեռևս մտայնության վերափոխման չի հանգեցրել»<sup>2</sup>։ Ծիշտ է նկատված, որ «Եթե պետության քաղաքացիները հասարակական հարաբերություններում հանդես չեն գալիս որպես լիարժեք իրավունակ անհատներ, նրանք գործնականում իրավագուրկ են, իրավական պետության կամ իրավունքի գերակայության մասին խոսք լինել չի կարող, իսկ քաղաքացիական հասարակության մասին դատողությունները կմնան որպես դատարկ կարգախոսներ»<sup>3</sup>։

Ասվածն ամբողջովին վերաբերում է նաև անվտանգության կարևոր մաս կազմող և պետություն-հասարակություն իրավահարաբերությունների օբյեկտ հանդիսացող պետական գաղտնիքին, որի իրավական կարգավորման հիմնախնդիրները հնարավոր չեն լուծել առանց տեսական վերլուծությունների և դրանց հիման վրա արված գիտագործնական եզրահանգումների։

Ներկա հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է առաջին հերթին այս հանգամանքներով։

**Թեմայի գիտական ուսումնասիրվածության վիճակը:** Թեման գիտական առումով ուսումնասիրված չէ, և ատենախոսությունն առաջին փորձն է՝ տեսականորեն վերլուծել

<sup>1</sup> Տես՝ «Ռազմավարության և անվտանգության հարցեր» հոդվածների ժողովածու, Եր., 2007, էջ 28

<sup>2</sup> Հարությունյան Գ., «Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները», Եր., 2003, էջ 34

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 35

Հայաստանի Հանրապետությունում պետական գաղտնիքի իրավական կարգավորման հիմնախնդիրները և ուղիներ մատնանշել դրանց լուծման համար: Կարելի է ասել՝ պետական գաղտնիքն առայսօր որպես առանձին իրավական սահմանակարգ անհրաժեշտ ուշադրության չի արժանացել հայ իրավագետների կողմից, և դրա ապացույցը համապատասխան տեսական հիմքի իսպառ բացակայությունն է հայ իրավական իրականության մեջ: Ուսումնասիրողների կողմից կան պետական գաղտնիքի մասին օրենսդրության մաս կազմող առանձին ոլորտների (մարդու իրավունքներ, տեղեկատվության ազատություն և այլն) վերաբերյալ հոդվածներ, գրքեր, այնուամենայնիվ՝ բուն պետական գաղտնիքի հետ դրանք անմիջականորեն գրեթե չեն առնչվում, ասպարեզը մնում է բաց: Դրան հակառակ՝ բավականաշափ հարուստ է պետական գաղտնիքի վերաբերյալ ուսուական իրավագիտական գրականությունը, և դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ սույն ատենախոսության շրջանակում հաճախ է անդրադարձ կատարվում օտարերկրյա աղբյուրներին:

**Հետազոտության օբյեկտը:** Ատենախոսության թեմայով պայմանավորված՝ հետազոտության բուն օբյեկտը պետական գաղտնիքն է որպես իրավական-հասարակական որոշակի փոխհարաբերություններ արտացոլող սահմանակարգ: Ավելի կոնկրետ՝ դրանք այն փոխհարաբերություններն են, որոնք տեղեկությունները պետական գաղտնիքի շարքը դասելու, դրանց շրջանառության և իրավական պաշտպանության, ինչպես նաև գաղտնագերծման, ապօրինի տարածման համար պատասխանատվության ժամանակ ծագում են պետության և հասարակության միջև: Անհրաժեշտության դեպքում, իրավահամեմատական մեթոդով, գիտաքեզում անդրադարձ է կատարվում նաև այլ երկրներում, մասնավորապես Ռուսաստանի Դաշնությունում և ԱՊՀ-ի անդամ մյուս պետություններում ծագող համանման հասարակական հարաբերությունների օրենսդրական կարգավորմանը, հղումներ են արվում ասպարեզում առկա համաշխարհային փորձին: Դա հնարավորություն է տալիս Հայաստանի Հանրապետությունում պետական գաղտնիքը դիտարկել միջազգային իրավական հարթության մեջ:

**Հետազոտության տեսական հիմքը:** Ատենախոսության մեջ հեղինակը, պետական գաղտնիքի վերաբերյալ Ռուսաստանի և այլ երկրների գիտնականների հիմնարար աշխատություններն ու գիտական մշակումներն ընդունելով որպես հետազոտության տեսական հիմք, դրանք դասակարգում է հետևյալ կերպ. պետական գաղտնիքի իրավական կարգավորման վերաբերյալ ուսումնասիրություններ (Ա. Ա. Ֆատյանով, Ռ. Վ. Կորսուն, Ա. Ա. Անտոպոլսկի, Վ. Ն. Լոպատին, Ի. Լ. Պետրովիսին, Վ. Ա. Գերասիմենկո, Մ. Ա. Վուս, Վ. Ի. Յարոչկին և ուրիշներ), թեմային առնչվող տեղեկատվական անվտանգության խնդիրների վերաբերյալ ուսումնասիրություններ (Ա. Բ. Ազապով, Յու. Ս. Բատուրին, Ի. Լ. Բաչիլո, Ա. Բ. Վենգերով, Ա. Կ. Կարախանյան և ուրիշներ), պետական կառավարման խնդիրների, հատկապես պետական կառավարման մարմինների և քաղաքացիների փոխհարաբերություններին նվիրված ուսումնասիրություններ (Ա. Պ. Ալյոխին, Մ. Վ. Բագլայ, Ի. Լ. Բաչիլո, Դ. Ն. Բախրախ, Բ. Մ. Լազարե, Լ. Լ. Պոպով և ուրիշներ):

Ատենախոսության մեջ շոշափվող այս կամ այն հարցի առնչությամբ անհրաժեշտաբար անդրադարձ է կատարված նաև հայ հեղինակների (Գ. Հարությունյան, Տ.

Բարսեղյան, Ա. Բաղդասարյան, Ա. Հարությունյան, Գ. Ղազինյան, Ա. Դիլբանյան, Ն. Այվազյան և ուրիշներ) ուսումնասիրություններին:

**Հետազոտության մեթոդական հիմքը:** Ելնելով Հայաստանի Հանրապետությունում պետական գաղտնիքի իրավական կարգավորման առանձին հարցերի տեսական և գործնական առավել հանգամանալից վերլուծության անհրաժեշտությունից՝ հեղինակը կիրառել է այնպիսի հետազոտական մեթոդներ, ինչպիսիք են դիալեկտիկական, տրամաբանական, իրավահամեմատական, պատմահամեմատական, նկարագրական ու վերլուծական մեթոդները: Դրանց համալիր կիրառումը նպատակ է հետապնդել ապահովել հետազոտության և առանձին վերցրած դրա գիտական արդյունքների օբյեկտիվությունն ու արժանահավատությունը:

**Հետազոտության նորմատիվ հիմքը:** Հետազոտության նորմատիվ հիմք են կազմել ՀՀ Սահմանադրությունը, պետական գաղտնիքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը և ենթաօրենսդրական ակտերը, «Մարդու իրավունքների համընդհանուր հոչակագիրը», «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը», ԱՊՀ երկրների Միջխորհրդարանական վեհաժողովի «ԱՊՀ-ում տեղեկատվական հարաբերությունների կարգավորման մասին» օրենսդրական արձանագրությունը, ՀԱՊԿ-ի համապատասխան որոշումները և այլն:

**ՈՒսումնասիրության նպատակը և խնդիրները:** Ընդհանուր գծերով դրանք ներկայացնենք այսպես. տեսական և գիտագործնական առումներով վերլուծել, գնահատել տեղեկությունների գաղտնագրման ոլորտում պետության և հասարակության փոխհարաբերությունների իրավական կարգավորման, այդ տեղեկությունների շրջանառության ու պաշտպանության առկա վիճակը և ուրվագծել Հայաստանի Հանրապետությունում պետական գաղտնիքի մասին օրենսդրության հետագա կատարելագործման ուղիները: Այս համատեքստում քննության են առնվում հանրապետությունում պետական գաղտնիքի սահմանակարգի կառուցվածքի տեսահրավակական հիմունքները, կատարվում են տեղեկությունների գաղտնագրման և դրանց օրենսդրական սահմանափակումների, գաղտնի տեղեկությունների պաշտպանության կառուցակարգերի (մեխանիզմների) ու չափանիշների իրավագիտական վերլուծություններ, քննության են առնվում հարցեր՝ կապված պետական գաղտնիքի ոլորտում կատարվող իրավախսումների համար պատժամիջոցների սահմանման հետ:

Ատենախոսությունը նպատակ է հետապնդում նաև լրացնել այն բացը, որ պետական գաղտնիքի մասով առկա է հանրապետության իրավական դաշտում: Խոսքն այն մասին է, որ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքն անհրաժեշտ չափով դիտարկված չէ որպես իր բնույթով շրջանակային օրենք ոլորտում գործող այլ օրենքների, նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ, և սույն ուսումնասիրությամբ խնդիր է դրվում պետական գաղտնիքը քննության առնել դրանց հետ մեկ ընդհանուր իրավական հարթության մեջ, ինչը շատ կարևոր է հասարակական հարաբերություններում միասնական իրավական քաղաքականության մշակման և իրականացման տեսանկյունից:

Նշված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ ենք համարել առաջադրել և լուծել հետևյալ խնդիրները.

1. Վեր հանել պետական գաղտնիքի պատմական նախադրյալները, պարզել դրանց ազդեցությունը Հայաստանի Հանրապետությունում պետական գաղտնիքի սահմանակարգի ձևավորման վրա,

2. պարզաբանել պետական գաղտնիքի էռոթյունը, այսինքն՝ այդ երևույթի հատկանիշների ամբողջությունը, որու անհրաժեշտ է այն խորությամբ ընկալելու և նույնանման երևույթներից տարանջատելու համար,

3. Վեր հանել պետական գաղտնիքի դերն ու նշանակությունը Հայաստանի Հանրապետության ազգային և տեղեկատվական անվտանգության համակարգերում,

4. հիմնավորել «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ առանձին օրենքի ընդունման անհրաժեշտությունը՝ պետական գաղտնիքի և ծառայողական գաղտնիքի հարաբերակցության մեջ վերջինս դիտարկելով որպես պետական գաղտնիքի հետ սերտորեն փոխկապակցված, նույնատիպ իրավական կարգավորման ենթարկվող և միևնույն ժամանակ առանձին իրավական երևույթ,

5. գնահատել պետական գաղտնիքի սահմանակարգի ներկա տեսահրավական կառուցվածքը, մատնանշել դրա իրավական բովանդակության հետագա հստակեցման խնդիրները,

6. Վերլուծել Հայաստանի Հանրապետությունում պետական գաղտնիքի ձևավորման, տեղեկությունները պետական գաղտնիքի շարքը դասելու, դրանց սահմանափակումների իրավական կարգավորման հիմնախնդիրները, վերհանել առկա բացերը,

7. Դիտարկել պետական գաղտնիքի պաշտպանության ներկա վիճակը, մատնանշել դրա իրավական կարգավորման կատարելագործման ուղիները,

8. քննության առնել պետական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հետ կապված հակահրավական գործողությունների իրավական գնահատման հիմնախնդիրները:

**Հետազոտության գիտական նորույթը:** Սույն ատենախոսական աշխատանքը հանրապետության իրավագիտական պրակտիկայում երևան եկող առաջին հետազոտությունն է, որով փորձ է արվում ամբողջական ձևով ներկայացնել և վերլուծել Հայաստանի Հանրապետությունում պետական գաղտնիքի մասին գործող օրենսդրությունը, առաջադրել դրա կատարելագործման կոնկրետ ուղիներ ու հնարավորություններ՝ խնդիրը դիտարկելով իրավական համակարգում իրականացվող բարեփոխումների համատեքստում:

Ատենախոսությամբ առաջին անգամ հայրենական իրավագիտության մեջ շրջանառվում է գաղտնիք կազմող տեղեկությունների մողելավորման գաղափարը, պետական գաղտնիքը դիտարկվում է որպես իրավական սահմանակարգ՝ իր ենթասահմանակարգերով, ներկայացվում դրա տեսահրավական կառուցվածքը: Տրվում է «պետական գաղտնիքի պաշտպանություն» հասկացության նոր սահմանում, նորովի են մեկնաբանվում «տեղեկություն», «տեղեկատվություն», «պարտավորություն», «պարտականություն» և պետական գաղտնիքի մասին օրենսդրության մեջ հանդիպող այլ հասկացություններ: Հայրենական իրավագիտական տեսության մեջ նորություն է գաղտնիքի՝ որպես տեղեկության տարատեսակի և դրանից բխող՝ տեղեկատվական իրավահարաբերությունների օբյեկտի դիտարկումը:

Ատենախոսությունը տեսական և գործնական առումներով հիմնավորում է պետական և ծառայողական գաղտնիքների տարանջատման, դրանց մասին առանձին օրենքների ընդունման, գործադիր իշխանության մարմինների համակարգում պետական գաղտնիքի պաշտպանության հատուկ մասնագիտացված մարմնի ստեղծման անհրաժեշտությունը: Արվում են կոմիտետ առաջարկներ՝ կապված հասարակական հարաբերություններում պետական գաղտնիքի դերի և նշանակության բարձրացման հետ:

Ատենախոսությունը հիմնավորում է նաև «Ազգային անվտանգության մասին» ՀՀ օրենք ընդունելու և «ազգային անվտանգություն» հասկացությունն այդ օրենքով սահմանելու անհրաժեշտությունը:

### **Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներ:**

1. Հայ իրականության մեջ պետական գաղտնիքը գոյություն է ունեցել հայոց պետականության առաջացման ժամանակաշրջանից և ծառայել է պետության՝ որպես սոցիալական համակարգի անվտանգության ապահովման խնդիրներին: Այն հայ իրավաքաղաքական մտքի կողմից ի սկզբանե դիտարկվել է որպես տեղեկություն, հիմնականում՝ ռազմական բնույթի: Գիտակցվելով որպես պետության անվտանգության ապահովման երաշխիք՝ պետական գաղտնիքների պաշտպանությունը հայոց հին պետականության մեջ իրականացվել են պետական ապարատի կողմից, դիտարկվել որպես պետական գործունեության ոլորտ: Այս առումով՝ պետական գաղտնիքի պատմական նախադրյալները, ոլորտում կուտակված հայրենական փորձը կարևոր ազդեցություն են ունեցել հայ իրականության մեջ պետական գաղտնիքի հասարակական ընկալումների գարգացման և որպես արդյունք՝ Հայաստանի Հանրապետությունում պետական գաղտնիքի իրավական սահմանակարգի ձևավորման վրա:

2. Պետական գաղտնիքն իր էությամբ տեղեկության տարատեսակ է, պարզապես՝ տեղեկություն, որը հանված է ազատ շրջանառությունից երկրի ազգային անվտանգության ապահովման նկատառումներով, և նման տեղեկությունների պաշտպանությունը, դրանց տարածումը կանխելու և անվտանգությունն ապահովելու նպատակով, իրականացնում է պետությունը: Որպես իրավական երևույթ՝ պետական գաղտնիքն օժտված է տեղեկությանն օրենսդրորեն ներկայացվող հատկանիշներով (օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված լինելը) և, կազմելով տեղեկատվության բռվանդակությունը, հանդիսանում է տեղեկատվական իրավահարաբերությունների օրյեկտ:

3. Պետական գաղտնիքի սահմանակարգն ազգային անվտանգության ապահովման կարևոր բաղկացուցիչն է, ուստի դրա կատարելագործման, դերի և նշանակության բարձրացման համար անհրաժեշտ է կատարելագործել ոչ միայն պետական գաղտնիքի մասին օրենքը, այլև ազգային անվտանգության, տեղեկատվական անվտանգության վերաբերյալ օրենսդրությունն ընդհանրապես: Մասնավորապես՝ ընդունել «Ազգային անվտանգության մասին» ՀՀ օրենք և «ազգային անվտանգություն» հասկացությունը սահմանել այդ իրավական ակտով: Ազգային, տեղեկատվական անվտանգության վերաբերյալ նորմատիվ իրավական ակտերում (նաև հայեցակարգային բնույթի ակտերում) ամրագրել դրույթներ պետական գաղտնիքի մասին, դրանով իսկ պետական գաղտնիքի սահմանակարգի համար ստեղծել առավել բարձր մակարդակի իրավական հիմքեր, հասարակության մեջ հասնել այն իրավագիտակցությանը, որ պետական

գաղտնիքը պետության իրավունքն է, այդ իրավունքի իրագործումը՝ պետության պարտականությունը իր քաղաքացիների, հասարակության հանդեպ, նրա օրինական գործառույթը:

4. Պետական գաղտնիքը և ծառայողական գաղտնիքը, որքան էլ լինեն փոխկապակցված, առանձին սահմանակարգեր են, դրանց իրավական կարգավորումը մեկ օրենքով, այն է՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով, անհրաժեշտ չափով չի արտացոլում պետական գաղտնիքի՝ որպես հասարակական և իրավական բացառիկ (էքստրաօրդինար) երևույթի դերն ու նշանակությունը, նվազեցնում է դրա հետ կապված հասարակական հարաբերությունների կարևորությունը, ուստի դրանց իրավական կարգավորումն անհրաժեշտ է իրականացնել առանձին օրենքներով, պաշտպանությունը՝ առանձին իրավական ռեժիմներով:

5. Հայաստանի Հանրապետությունում պետական գաղտնիքի սահմանակարգը, որպես ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս, բխում է ՀՀ Սահմանադրությունից, միջազգային իրավունքի հանրահայտ սկզբունքներից և իրավական բովանդակությամբ կրում է միանգամայն օրինական (լեզվիմ) բնույթ: Որպես սահմանակարգ այն ունի միջազգութային, ընդհանուր իրավական բնույթ, որը ներառում է իրավունքի տարրեր ճյուղերի, այդ թվում՝ սահմանադրական, վարչական, աշխատանքային, ֆինանսական իրավունքի նորմեր:

6. Միջազգային պրակտիկայում կիրառվում են տեղեկությունները պետական գաղտնիքի շարքը դասելու երկու հիմնական մոդելներ՝ ցանկավորման մոդել և անձնավորման մոդել: Հայաստանի Հանրապետությունում գործում է տեղեկությունները պետական գաղտնիքի շարքը դասելու (պետական գաղտնիքի ձևավորման) ցանկավորման մոդելը՝ անձնավորման մոդելի որոշակի տարրերով: Նշված հանգամանքը ենթադրում է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում ամրագրված ցանկավորման մոդելի շրջանակներում գործող բոլոր ցանկերի («պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների», «պետական գաղտնիքի շարքը դասելու լիազորություններով օժտված պաշտոնատար անձանց», «պետական գաղտնիքի շարքը դասելու սահմանափակումների») առնվազն խիստ համապատասխանություն միմյանց և պետական գաղտնիքի մասին օրենսդրությանն ընդհանրապես, առանց որի պետական գաղտնիքի ոլորտում անհնար է իրականացնել արդյունավետ պետական քաղաքականություն: Մինչեռ Հայաստանի Հանրապետությունում պետական գաղտնիքի ձևավորման կառուցակարգում, սկսած օրենքի մակարդակից, առկա են բազմաթիվ թերություններ, որոնց շտկումը պահանջում է կառուցակարգը կարգավորող իրավական նորմերի արմատական վերանայում:

7. Պետական գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանության կառուցակարգում «պետական գաղտնիքի պաշտպանություն» հասկացությունն ունի առաջնային նշանակություն, մինչդեռ դրա՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում տրված սահմանումը թերի է և չի համապատասխանում պետական գաղտնիքի՝ որպես տեղեկության տարատեսակի պաշտպանության ժամանակակից ընկալումներին: Առաջարկվում է այն սահմանել հետևյալ կերպ. «Պետական գաղտնիքի պաշտպանությունը պետության կողմից նշտապես իրականացվող, օրենսդրությամբ նախատեսված իրավական, կազմակերպչական, ինժեներատեխնիկական և այլ անհրաժեշտ

միջոցների ու մեթոդների համակարգված կիրառումն է՝ ուղղված գաղտնի տեղեկությունների տիրապետման և տնօրինման պետության իրավունքի պաշտպանության ու այդ տեղեկությունների անվտանգության ապահովմանը»:

Պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպումը Հայաստանի Հանրապետությունում փաստացի իրականացնում են բարձրագույն իշխանության մարմինները՝ յուրաքանչյուրն իր իրավասության շրջանակներում, մասնավորապես՝ Ազգային ժողովն իրականացնում է պետական գաղտնիքի պաշտպանության օրենսդրական կարգավորումը: Նշված հանգամանքը, որքան էլ կարևոր, այդուհանդերձ հստակորեն սահմանված չէ ՀՀ օրենսդրությամբ, իսկ Ազգային ժողովի պարագայում՝ ընդհանրապես սահմանված չէ: Սա օրենսդրական բացքում է, որը պետք է վերացվի «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի հետագա փոփոխություններով: Միևնույն ժամանակ պետական գաղտնիքի պաշտպանությունը, որպես պետության կարևոր գործառույթ, պահանջում է մասնագիտական մոտեցում, հետևաբար նաև՝ պետական գաղտնիքի պաշտպանության մասնագիտացված մարմնի առկայություն պետական իշխանության մարմինների համակարգում:

8. Գիտականորեն իմնավորված հետևողություն այն մասին, որ պետական գաղտնիքի հետ կապված հակաիրավական գործողությունների համար պատասխանատվության համակարգի ամբողջականության ապահովման և արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է պետական գաղտնիքի պահպանման կանոնների որոշակի տեսակի խախտումների համար սահմանել վարչական պատասխանատվություն, հստակեցնել կարգապահական պատասխանատվության իրավական հիմքերը:

**Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:** Հետազոտության արդյունքները, արված եզրահանգումներն ու առաջ քաշված դրույթները կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետությունում պետական գաղտնիքի սահմանակարգի հետագա կատարելագործմանն ուղղված աշխատանքներում և օրենսդրական նախաձեռնություններում, նպաստել պետական գաղտնիքի մասին ազգային օրենսդրության ընդհանուր գաղափարախոսության մշակմանը: Դրանք կարող են օգտագործվել նաև այնպիսի դաշնաքացների անցկացման ժամանակ, ինչպիսին են «Տեղեկատվական իրավունքը», «Տեղեկատվական անվտանգության իրավական ապահովումը» և այլն:

Հետազոտությունն օգտակար կարող է լինել թեմայի հետագա ուսումնասիրմամբ գրադարձների, բուհերի իրավագիտական ֆակուլտետների ուսանողների համար:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը (ապրոբացիան):** Սույն հետազոտության իմնական եզրակացություններն ու դրույթներն արտացոլված են տպագրված գիտական հոդվածներում: Ատենախոսության իմնական արդյունքները ներդրված են և օգտագործվում են ՀՀ ազգային անվտանգության ծառայության գիտառումնական կենտրոնի ուսումնական գործնաքացում և գիտահետազոտական աշխատանքներում: Հեղինակի կողմից դրանք օգտագործվել են նաև պետական գաղտնիքի հետ աշխատանքներ իրականացնող քաղաքացիական ծառայողների վերապատրաստման դաշնաքացներում: Աշխատանքը քննարկվել է Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական ֆակուլտետի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնում և երաշխավորվել իրապարակային պաշտպանության իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

**Հետազոտության կառուցվածքը և բովանդակությունը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից և ութ պարագրաֆներից, որոնք բոլորն ել ավարտվում են հետևողություններով, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ծավալն է 187 մեքենագիր էջ:

**Ատենախոսության բովանդակային մասը հետևյալն է.**

**Ներածության** մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը ժողովրդավարական պետության ձևավորման նոր պայմաններում, ներկայացվում են ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները, օբյեկտը, տեսական և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, գործնական և տեսական նշանակությունը, ինչպես նաև՝ ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը:

Ատենախոսության բովանդակային մասի հետ կապված՝ մեկ պարզաբանում: Գաղտնիքի տեսության խոշոր մասնագետ, պրոֆ. Ա. Ֆատյանովը, պետական գաղտնիքի սահմանակարգը դիտարկելով որպես իրավական երևույթ, այն բաժանում է ենթասահմանակարգերի, որոնք թվով երեքն են:

1. պետական գաղտնիք կազմող տեղեկությունները,
2. պետական գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանության կառուցակարգը,
3. պետական գաղտնիք կազմող տեղեկությունների հետ կապված՝ հակահրավական գործողությունների համար կիրառվող պատասխանատվությունը:

Պետական գաղտնիքի վերաբերյալ Ո՞Դ և ՀՀ օրենսդրություններն ընդհանուր առմանք համընկնելի են, կառուցվածքային և բովանդակային մասով՝ բավական մոտ, և կարծում ենք՝ Ա. Ֆատյանովի առաջարկած հիշյալ սխեման միանգամայն ընդունելի է նաև Հայաստանի Հանրապետությունում պետական գաղտնիքի սահմանակարգի համար: Ուստի, ներկայացնելով պետական գաղտնիքի սահմանակարգի տեսահրավական բովանդակությունը, հետագա շարադրանքում որպես պարագրաֆներ թեմատիկ առումով ներառել ենք Ֆատյանովի նշած ենթասահմանակարգերը՝ մեր կատարած փոփոխություններով, որոնք բխում են ատենախոսության ընդհանուր տրամաբանությունից:

«Պետական գաղտնիք կազմող տեղեկությունները» ենթասահմանակարգի մեջ ներառված են այն նորմերը, որոնք կարգավորում են այնպիսի հասարակական հարաբերություններ, որոնց առարկայական կողմերը կարող են հանդիսանալ պետական գաղտնիք: Ներառված է նաև տեղեկությունները պետական գաղտնիքի շարքը դասելու և գաղտնագրելու, ինչպես նաև տեղեկությունների և տեղեկակիրների գաղտնագերծման կարգը: Ենթասահմանակարգը ատենախոսության մեջ կրում է «Պետական գաղտնիքի ձևավորման իրավական հիմքերը» վերտառությունը:

«Պետական գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանության կառուցակարգը» ենթասահմանակարգին վերաբերում են այն նորմերը, որոնք սահմանում են պետական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների պաշտպանության կարգն ու պայմանները: Այս ենթասահմանակարգն իր մեջ ընդգրկված նորմերի, դրանք պարունակող իրավական ակտերի քանակով առավել ծավալուն է, քանի որ այս կարգի տեղեկություն

ների պաշտպանությունը համակարգային բնույթ է կրում և իրականացվում է տարբեր միջոցներով:

«Պետական գաղտնիք կազմող տեղեկությունների հետ կապված՝ հակաիրավական գործողությունների համար պատասխանատվությունը» ենթասահմանակարգը ներառում է պետական գաղտնիքի նկատմամբ հակաիրավական գործողությունների որակման, դրանց համար պատասխանատվության առաջացման պայմանները և չափերը: Ատենախոսության մեջ այս ենթասահմանակարգը ներկայացված է «Պետական գաղտնիքի ոլորտում հակաիրավական գործողությունների համար սահմանված պատասխանատվությունը» վերտառությամբ:

Կարծում ենք՝ երկրորդ գլուխն ըստ պարագրաֆների հիշյալ ենթասահմանակարգերին համապատասխան բաժանելը շարադրանքը դարձնում է ավելի կառուցիկ և հնարավորություն տալիս թեման դիտարկել մեկ միասնական տրամաբանության մեջ:

**Սոազին գլխի** («ՀՀ պետական գաղտնիքի իրավական հիմունքները») 1-ին պարագրաֆում վերհանվում են պետական գաղտնիքի ծագման և զարգացման պատմական նախադրյալները՝ սկսած գաղտնիքի, որպես սոցիալական երևույթի, նախնական ընկալումներից: Անդրադարձ է կատարվում հայ հնագույն պետության մեջ պետական գաղտնիքի գոյության մեջ հասած փաստերին, դրա վերաբերյալ հայոց մատենագրության մեջ և միջնադարյան դատաստանագրքերում հանդիպող հիշատակումներին, պարզաբանվում է գաղտնագրությունը որպես հայ իրականության մեջ գաղտնիքի պաշտպանության հնագույն ձև: Մանրամասն անդրադարձ է կատարվում Կիլիկյան Հայատանում պետական գաղտնիքի պահպանման կարևորմանն ու դրա օրենսդրական ամրապնդմանը՝ դրանք դիտելով որպես հայ իրավաքաղաքական մտքի զարգացման նոր աստիճան, որն իր արտահայտությունը գտավ երկրի միջազգային հարաբերություններում, մասնավորապես՝ դիվանագիտական ասպարեզում: Բերվում են ասվածը հաստատող կոնկրետ օրինակներ:

**Սոազին գլխի 2-րդ պարագրաֆն** ամբողջությամբ նվիրված է պետական գաղտնիքի էության բացահայտմանը: Հեղինակը թեման քննարկում է երկու հիմնական ուղղությամբ՝ պետական գաղտնիքը որպես տեղեկության տարատեսակ, և պետական գաղտնիքը որպես տեղեկատվական իրավահարաբերությունների օբյեկտ:

Թեմայով պայմանավորված՝ հանգամանալից անդրադարձ է կատարվում «Էություն» հասկացության փիլիսոփայական ընկալմանը, «գաղտնիք» հասկացության մեկնաբանմանը և այս համատեքստում՝ պետական գաղտնիքի սահմանմանը «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում:

Հեղինակի դիտարկմամբ՝ առհասարակ՝ որևէ երևույթի էության պարզաբանումը ինքնին յուրահատուկ արժեք է իմացության գործընթացում: Ասվածը վերաբերում է նաև պետական գաղտնիքին՝ որպես երևույթի, որի էությունը, սակայն, Հայաստանի Հանրապետությունում գիտական առումներով ուղղակիորեն պարզաբանված չէ, ավելին՝ այն ընդհանրապես պատշաճ ուշադրության չի արժանացել: Մինչդեռ պետական գաղտնիքի էության պարզաբանումը, ինչպես մյուս բոլոր իրավական երևույթների դեպքում, առաջնային նշանակություն ունի դրա ճիշտ և համապարփակ իրավական կարգավորումն իրականացնելու համար: Այն հնարավորություն է տալիս գիտականորեն հասկա-

նաև երևույթը, վեր հանել դրա զարգացման օրինաչափությունները և այդ հիմքի վրա հանդես գալ կոնկրետ առաջարկություններով:

Անդրադարձ է կատարվում նաև «տեղեկություն» և «տեղեկատվություն» հասկացություններին, վերհանվում են այն հակասությունները, որ տիրում են դրանց գործածման մեջ: Հստակորեն տարանջատելով տեղեկությունը՝ տեղեկատվությունից, հեղինակը հանգում է այն եզրակացության, որ դրանց նույնանշանակ օգտագործումը, ինչի բազմաթիվ օրինակներ կարելի է գտնել օրենսդրության մեջ, հետևանք է տեղեկատվության, որպես իրավական հասկացության սահմանման բացակայության, որն էլ իր հերթին հանգեցնում է տեղեկության և տեղեկատվության հարաբերակցության ոչ ճիշտ ընկալման և ուղղակիորեն ազդում պետական գաղտնիքի՝ որպես տեղեկության էության բացահայտման վրա:

Ներկայացվում և վերլուծվում են պետական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների էության հիմնական հատկանիշները: Կարևորելով գաղտնիք կազմող տեղեկությունների դասակարգումն ըստ մատչելիության՝ հեղինակն այն դիտում է որպես պետական գաղտնիքի էական հատկանիշ: Այդպիսի հատկանիշներ են դիտվում նման տեղեկությունների պատկանելիության որոշումն ըստ ոլորտների, պետության կողմից դրանց հատուկ պաշտպանությունը, սերտ կապն ազգային անվտանգության հետ: Խնդրի առավել լայն ընդգրկման նպատակով անցկացվում են զուգահեռներ այլ երկրների համապատասխան օրենսդրությունների հետ:

**Առաջին գլխի 3-րդ պարագագում** պետական գաղտնիքը վերլուծվում է ՀՀ ազգային անվտանգության ապահովման համատեքստում և ցույց տրվում, որ պետական գաղտնիքի իրավական կարգավորման կատարելագործման համար անհրաժեշտ է կատարելագործել ազգային անվտանգության վերաբերյալ օրենսդրությունն ընդհանրապես: Ելնելով դրանից՝ հեղինակը մանրամասն մեկնաբանում է «անվտանգություն», «ազգային անվտանգություն» հասկացությունները, ներկայացնում և մեկնաբանում ազգային անվտանգության բնութագրից կողմերը, հիմնավորում «Ազգային անվտանգության մասին» ՀՀ օրենքի ընդունման անհրաժեշտությունը՝ վկայակոչելով նման օրենքի առկայությունն այլ երկրներում, վերլուծում և մեկնաբանում «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության» հիմնական դրույթները:

Հեղինակի դիտարկմամբ՝ «Ազգային անվտանգության մասին» (կամ՝ «Անվտանգության մասին») ՀՀ օրենքի բացակայությունը առաջացնում է որոշակի իրավական վակուում: Ժամանակին, դեռևս «Ազգային անվտանգության ռազմավարության» մշակման փուլում, հնչել են կարծիքներ, որ այն պետք է վերափոխել օրենքի, սակայն փաստարդի կազմմամբ զբաղվող Միջգերատեսչական հանձնաժողովը հարմար է գտել այն ընդունել ՀՀ նախագահի հրամանագրով: Ելակետը եղել է նման քաղաքական փաստարդի ընդունման համաշխարհային փորձը (ՌԴ, ԱՄՆ և այլ երկրներ) և այն մտավախությունը, որ տվյալ շրջանում փաստարդի «կերպափոխումը օրենսդրական ակտի կարող էր զապաշապիկ դառնալ քաղաքացիական հասարակության կայացման, ընդհանուր առմամբ՝ Հայաստանի ժողովրդավարացման համար»<sup>4</sup>:

<sup>4</sup> «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն», «Հայկական քանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, Եր.2007, էջ 10

Ընդունելով այս հայեցակետը որպես ժամանակի թելաղրանք, որը «քիում էր մեր ազգային անվտանգության շահերի ռեալ քաղաքական հաշվարկումից»<sup>5</sup>, միաժամանակ չի կարելի ընդունել «Ազգային անվտանգության մասին» ՀՀ օրենքի ընդունման անհրաժեշտությունը, որն օր-օրի ավելի է հասունանում երկրում ժողովրդավարական զարգացումներին գուգընթաց: Նույնը պետք է ասել տեղեկատվության, տեղեկատվական տեխնոլոգիաների, տեղեկատվության պաշտպանության ոլորտում շրջանակային օրենքի վերաբերյալ, որպիսին նույնպես առայսօր ընդունված չէ («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքն այսօր չի համապատասխանում ժամանակակից պահանջներին, դրանում անզամ սահմանված չէ տեղեկատվությունը որպես իրավական հասկացություն, չկան տեղեկատվության դասակարգման, դրանց պաշտպանության վերաբերյալ կոնկրետ դրույթներ և այլն):

Իր դիտարկումներում հեղինակը ենում է այն մտքից, որ անվտանգությունը մարդկանց, սոցիալական համակարգերի, այդ բվում՝ պետությունների համար ոչ թե վտանգի բացակայության վիճակն է, այլ վտանգներից պաշտպանվածության վիճակը, որը ոչ թե պասիվ, այլ ակտիվ վիճակ է և բնութագրվում է անձի, հասարակության և պետության առաջընթաց զարգացմանն ուղղված գործողություններով: Ազգային անվտանգությունը անձի, հասարակության և պետության փոխկապակցված շահերի ամբողջություն է: Հնարավոր չէ պատկերացնել անձի անվտանգությունն առանց պետական և հասարակական անվտանգության: Եվ չի կարող անվտանգ լինել այն պետությունը, որտեղ վտանգված են անձը, նրա իրավունքներն ու ազատությունները: Դրանով պայմանավորված՝ ազգային անվտանգությունը, ինչպես նաև դրա մաս կազմող տեղեկատվական անվտանգությունը, դիտվում են որպես պետական գաղտնիքը՝ որպես ազգային անվտանգության և տեղեկատվական անվտանգության բաղադրիչ: Այս համատեքստում հեղինակը ներկայացնում է պետական գաղտնիքի առավել բնութագրիչ կողմերը.

1. **Պետական գաղտնիքի իրավունքն ինքնիշխան պետության անքակտելի իրավունքն է:**

2. **Պետական գաղտնիքի սահմանակարգը տեղեկատվական հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման սահմանակարգ է:**

3. **Պետական գաղտնիքը, ինչպես տեղեկատվությունն ընդհանրապես, ազգային ուազմավարական ռեսուրս է:**

4. **Պետական գաղտնիքի պաշտպանությունը ոչ միայն իրավական, տեխնիկական, այլև մշակութաբանական խնդիր է:**

Հեղինակի դիտարկմամբ՝ պետական գաղտնիքի հիշյալ բնութագրիչ կողմերը բավարար չափով իրենց արտացոլումը չեն գտել օրենսդրության մեջ, և այս հանգամանքն իր հերթին հաստատում է այն, որ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը կարիք ունի արմատական բարեփոխման: Դրա պատճառներից մեկն էլ այն է, որ հիշյալ օրենքն ընդունվել է ավելի վաղ, քան «Ազգային անվտանգության ուազմավարությունը», «Տեղեկատվական անվտանգության հայեցակարգը», «Ռազմական դրկտրինը», և քաղաքական այս կարևորագույն փաստաթղթերի շատ դրույթներ, որոնք կարող են առաջնորդող և կողմնորոշիչ լինել պետական գաղտնիքի սահմանակարգի հա-

<sup>5</sup> Նույն տեղում

մար, քնականաբար՝ իրենց պատշաճ արտացոլումը չեն գտել օրենքում: Եվ հետո՝ անցած շուրջ 15 տարիներին հանրապետության ներքին և արտաքին կյանքում կատարվել են արմատական փոփոխություններ, առկա են նոր իրողություններ, որոնք իրենց իրավական արտացոլումը պետք է գտնեն նաև ազգային անվտանգության համատեքստում պետական գաղտնիքի մասին օրենսդրության մեջ: Այդ իրողությունների և ընդհանրապես պետական գաղտնիքի մասին օրենսդրության պահանջների հանրության իրազեկումը պետական գաղտնիքի պաշտպանության հուսալի միջոցներից մեկն է, որի վերաբերյալ անհրաժեշտ է թեմաներ նախատեսել տեղեկատվական անվտանգության գծով կազմակերպվող դասընթացներում, հասնել պետական գաղտնիքի ոլորտում իշխանության համապատասխան մարմինների և պաշտոնատար անձանց իրավագիտակցության մակարդակի բարձրացման, մարդկային գործոնի դերի ու նշանակության ուժեղացման:

**Սուազին գլխի 4-րդ պարագրաֆում** վերլուծվում է պետական գաղտնիքի հարաբերակցությունը ծառայողական գաղտնիքի հետ: Այս համատեքստում քննության են առնվում պետական և ծառայողական գաղտնիքների օրենսդրական կարգավորման առանձնահատկությունները՝ անդրադարձ կատարելով խորհրդային շրջանում առկա իրողություններին, հիմնավորվում է պետական և ծառայողական գաղտնիքների օրենսդրական տարանջատման անհրաժեշտությունը: Հեղինակի կողմից բերվում են պետական և ծառայողական գաղտնիքների մասին առանձին օրենքների ընդունման անհրաժեշտությունը հաստատող մի շարք փաստարկներ, հստակ պատասխաններ տրվում հետևյալ հարցերին.

-արդյո՞ք օրենսդիրը, պետական և ծառայողական գաղտնիքների հետ կապված հասարակական հարաբերությունների կարգավորումը սահմանելով մեկ օրենքով, չի նսեմացնում պետական գաղտնիքի դերն ու նշանակությունը որպես գերակա սահմանակարգ:

-եթե «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի հոդված 2-ը վերնագրված է՝ «Պետական և ծառայողական գաղտնիք հասկացությունը», այսինքն՝ օրենսդիրը պետական և ծառայողական գաղտնիքները դիտում է որպես մեկ գաղտնիք, ապա ի՞նչ տրամաբանությամբ է առանձին-առանձին սահմանում, թե ինչ է պետական գաղտնիքը և ինչ՝ ծառայողական գաղտնիքը: Ուրեմն պետք է վերմագրել ոչ թե «հասկացությունը», այլ «հասկացությունները»:

-եթե օրենսդիրը հոդված 2-ով ամրագրում է մեկ՝ «պետական և ծառայողական գաղտնիք» հասկացությունը, ապա ինչպես կարող է այդ մեկ հասկացության մեջ ներառվող տեղեկությունների տարածումը մի դեպքում «ծանր հետևանքներ առաջացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար», մյուս դեպքում պարզապես «վճաս հասցնել Հայաստանի Հանրապետության անվտանգությանը»:

Հեղինակն անվիճելի է համարում այն հանգամանքը, որ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը ներկա տեքստով և տրամաբանությամբ առնվազն պետք է կրեր «Պետական և ծառայողական գաղտնիքների մասին» (հոգնակի թվով) անվանումը: Այդ դեպքում դրանց տարրաժանումը կիහներ հստակ, և շատ ավելի հասկանալի կիහներ, թե ինչու, օրինակ, գաղտնիության աստիճաններին համապատասխան՝ պետական գաղտնիքի տեղեկակիրներին տրվում են «Հատուկ կարևորության» և «Հույժ գաղտնի»՝ իսկ ծառայողական գաղտնիքի տեղեկակիրներին՝ «Գաղտնի» դրոշ-

մազքեր (հոդված 4): Նման համակարգ է գործում ներկայումս Բելառուսում, որտեղ համանման օրենքը կրում է «Պետական գաղտնիքների մասին» անվանումը, իսկ բովանդակության մեջ խոսվում է նաև ծառայողական գաղտնիքի մասին:

Պետական և ծառայողական գաղտնիքների մասին առանձին օրենքներ ընդունելու անհրաժեշտությունը հաստատելու համար հեղինակը նաև զուգահեռներ է անցկացնում «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում ծառայողական գաղտնիքին տրված սահմանումների միջև և մատնանշում դրանց կատարյալ անհամապատասխանությունը միմյանց. առանձին կողմերով ծառայողական գաղտնիքի սահմանումներն այնքան են տարբերվում միմյանցից, որ թվում է՝ խոսքը ոչ թե մեկ, այլ երկու առանձին հասկացությունների մասին է: Ստացվում է, որ ՀՀ օրենսդրական դաշտում նույն իրավական երևույթին՝ ծառայողական գաղտնիքին, տրված են երկու իրարամերժ սահմանումներ, ըստ Էության ձևավորելով երկու տեսակի ծառայողական գաղտնիքներ. մեկը պարունակում է պետական գաղտնիքի մաս կազմող տեղեկություններ, հանդիսանում է պետության սեփականությունը և կարգավորվում է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքով, մյուսը կարող է հանդիսանալ նաև այլ սուբյեկտների սեփականությունը և կարգավորվում է քաղաքացիական օրենսդրությամբ: Իրավական բնույթի նման անհամաձայնությունները գործնական կյանքում, մասնավորապես դատաիրավական գործընթացներում, հեղինակի կարծիքով, կարող են հանգեցնել խրթին, ուղղակի փակուղային իրավիճակների առաջացման:

Հեղինակի դիտարկմամբ սահմանումներում նշված երկու «տեսակի» ծառայողական գաղտնիքների էլ կարող ենք հանդիպել հասարակական կյանքում: Ծառայողական բնույթի տեղեկությունները կարող են ձևավորվել և շրջանառվել ոչ միայն պետական իշխանության մարմիններում, այլև ցանկացած հիմնարկում և կազմակերպությունում (անկախ սեփականության և կառավարման ձևից), որոնք իրավունք ունեն ի պաշտպանություն սեփական շահերի մշակել իրենց ծառայողական գործունեության հետ կապված տեղեկություններին առնչվելու կանոններ՝ պահպանելու դ րանց գաղտնիությունը որպես ծառայողական արժեքներ: Խնդիրը դրանց ոչ ճիշտ կարգավորման մեջ է, եթե, օրենսդրորեն հստակ չսահմանազատելով ծառայողական գաղտնիքների «տեսակները», փորձ է կատարվել դրանք կարգավորել տարբեր օրենսդրական ակտերով: Արդյունքում մեկ «ծառայողական գաղտնիք» հասկացությանը տրվել են երկու հակասական սահմանումներ:

Հեղինակի համոզմամբ՝ «Ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ առանձին օրենքը ընդունելու դեպքում հնարավոր կդառնա նորովի և ամբողջականորեն սահմանել «ծառայողական գաղտնիք» հասկացությունը, որը կընդգրկի ինչպես պետական գաղտնիքի մաս կազմող տեղեկություններ պարունակող, այնպես էլ մյուս՝ առևտրային բնույթի ծառայողական գաղտնիքները: Նման պարագայում օրենքն ամբողջությամբ համապատասխան իրավական ոեժիմներ կսահմանի նաև դրանց պահպանության և պաշտպանության համար: Մյուս կողմից՝ «Ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի ընդունմամբ ավելի կհստակեցվեն պետական գաղտնիքի մասին առանձին օրենքի գործողության շրջանակները, ինչը կդառնա պետական գաղտնիք կազմող տեղեկությունների ավելի հուսալի պահպանության և պաշտպանության գրավական:

**Երկրորդ գլխի** («Պետական գաղտնիքի իրավական սահմանակարգի արտացոլումը ՀՀ օրենսդրության մեջ») 1-ին պարագրաֆում քննության են առնվում պետական գաղտնիքի սահմանակարգի տեսաիրավական կառուցվածքի հարցերը: Թեման քննարկելով լայն շրջագծի մեջ՝ հեղինակն անդրադառնում է պետական գաղտնիքի մասին ՀՀ օրենսդրության իրավական բովանդակությանը, պետական գաղտնիքի սահմանակարգին հարաբերակցվող օրենսդրությանը, հանգամանալից քննարկման առարկա դարձնում պետական գաղտնիքի մասին օրենսդրության գործողության ոլորտը և դրա հետ կապված իրավահարաբերությունների սուբյեկտները:

Հեղինակն իր դիտարկումներում որպես ելակետ ընդունում է օրենքի լեզիտիմության հատկանիշը, որով պետք է ներքափանցված լինեն պետական գաղտնիքի սահմանակարգի բոլոր նորմերը, և այս առումով առաջ է քաշում դրանց ներդաշնակության, միմյանց չհակասելու, իրավական համակարգում ընդունված ստորակարգության (սուբյեկտինացիայի) սկզբունքի պահպանման խնդիրը: Այս առումով մանրամասն անդրադառնում է կատարվում այն իրողությանը, որ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի ընդունմամբ հայ իրականության մեջ առաջին անգամ օրենսդրութեն ձևակերպվեց և իրապարակվեց պետական գաղտնիքի շարքը դասելու ենթակա տեղեկությունների ցանկն ըստ բնագավառների: Միևնույն ժամանակ օրենքում որպես կարևորագույն դրույթ սահմանվեց այն տեղեկությունների ցանկը, որոնք չեն կարող դասվել պետական և ծառայողական գաղտնիքի շարքը, հստակեցվեցին գաղտնի տեղեկությունների պաշտպանության կազմակերպման և ֆինանսավորման կառուցակարգերը, իրավական հիմնավորում ստացան դրանց հետ առնչվելու թույլտվության և մերժման հիմքերը, օրենսդրութեն սահմանվեց պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանության միջգերատեսչական և գերատեսչական վերահսկողության կարգը: Այդպիսով, գաղտնիքի մասին օրենքի հիմքում դրվեց իրավական հիմնարար սկզբունքներից մեկը՝ օրինականության սկզբունքը: Սա պետական գաղտնիքի սահմանակարգի տեսաիրավական կառուցվածքի հիմնայունն է, առանցը:

Խոսելով պետական գաղտնիքի մասին օրենսդրության իրավական բովանդակության մասին, հեղինակը նկատում է, որ գաղտնիքի այդ տեսակին վերաբերող տեղեկությունները և դրանց տնօրինումը գործնականում գտնվում են իշխանության գործադիր ճյուղի գործունեության ոլորտում: Ըստ երևույթին այդ է պատճառը, որ իրավագիտական գրականության մեջ կարծիք է հայտնված, թե պետական գաղտնիքի իրավական սահմանակարգն ու այն արտացոլող օրենսդրությունն իրենց բնույթով մտնում են վարչական իրավունքի ոլորտի մեջ: Հեղինակի կարծիքով՝ նման մոտեցումը սխալ է, քանի որ այն մեխանիկորեն նեղացնում է պետական գաղտնիքի սահմանակարգի գործողության ոլորտը, նվազեցնում դրանով կարգավորվող հասարակական հարաբերությունների դերն ու նշանակությունը հանրային կյանքում: Ինչպես տեղավորել վարչական իրավունքի շրջանակներում, օրինակ, «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքում ամրագրված այն նորմերը, որոնք կարգավորում են աշխատանքային իրավական (հոդված 8-ը՝ մշտական հիմունքներով պետական գաղտնիքի հետ առնչվող քաղաքացիներին արտոնություններ տալու մասով), ֆինանսական իրավական (հոդված 26-ը՝ պետական գաղտնիքի պահպանությանն ուղղված միջոցառումների՝ պետական բյուջեից ֆինանսավորման մասով) բնույթի հարաբերությունները: Օրենքի հոդված 27-

ով ուրվագծվում է պետական գաղտնիքի հետ վարվելու կանոնների առավել վտանգավոր խախտումների համար քրեական պատասխանատվությունը, իսկ իր ողջ բռվանդակությամբ օրենքը սահմանափակում է մարդու և քաղաքացու մի շարք սահմանադրական իրավունքներ՝ տեղեկատվության ազատության, ազատ տեղաշարժվելու, անձնական ու ընտանեկան կյանքի անձեռնմխելիության և այլն, որով էլ կարգավորում է սահմանադրական բնույթի հարաբերություններ: Ուստի ընդունելին այն տեսակետն է, որ պետական գաղտնիքի սահմանակարգն իր գործառույթներով օրյեկտիվորեն կրում է միջջուղային բնույթը և իրավամբ կարող է կոչվել ընդհանուր իրավական, այլ ոչ թե վարչական: Պարզապես պետք է ընդունել, որ պետական գաղտնիքի շրջանառության կարգավորման հարցում օրենսդիրները և վարչական իրավունքին, և համապատասխան վարչական ռեժիմին հատկացրել են առավել մեծ դեր:

**Երկրորդ գլխի 2-րդ պարագրաֆում** քննության են առնվում պետական գաղտնիքի ձևավորման իրավական հիմքերը: Թեմայի առավել ընդգրկուն քննարկման նպատակով վերլուծվում են պետական գաղտնիքի սահմանման հատկանիշները՝ դրանք դիտարկելով ազգային անվտանգության ապահովման համատեքստում, միաժամանակ զուգահեռներ անցկացնելով այլ երկրների օրենսդրություններում պետական գաղտնիքի սահմանումների հետ: Անշուշտ, տարբեր երկրներ ունեն պետական գաղտնիքի տարբեր սահմանումներ, սակայն դրանց համադրությունը հիմք է տվել իրավագիտական գրականության մեջ խոսել որոշակի մոդելի մասին, որտեղ իրենց արտահայտությունն են գտել պետական գաղտնիքի սահմանումներում ներառվող հետևյալ էական կողմերը.

-պետական գաղտնիք կազմող առարկաներ, երևույթներ, իրադարձություններ, գործունեության ոլորտներ,

-հակառակորդ (իրական կամ ենթադրյալ), ումից էլ հիմնականում իրականացվում է պետական գաղտնիքի պաշտպանությունը,

-պետական գաղտնիք կազմող տեղեկությունների (ըստ քնազավառների և կատեգորիաների) մատնանշում օրենքում, ցանկում, ուղեցույցում, իրահանգում,

-պետական գաղտնիքի տարածման դեպքում երկրի պաշտպանությանը, արտաքին քաղաքականությանը, տնտեսությանը, գիտատեխնիկական առաջընթացին հասցող վճար:

Հեղինակի դիտարկմամբ՝ նշված մոտեցումներն են դրված նաև **ՀՀ պետական գաղտնիքի սահմանման մեջ՝** տրված «**Պետական և ծառայողական գաղտնիքի մասին»** **ՀՀ** օրենքում. «**Պետական գաղտնիքը Հայաստանի Հանրապետության ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության քնազավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, և որոնց տարածումը կարող է ծանր հետևանքներ առաջացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար» (հոդված 2):**

Հեղինակի կարծիքով՝ սահմանման մեջ ընդհանուր ձևով առկա են վերոբերյալ մոդելում պետական գաղտնիքը քննորշող հատկանիշներից երկուսը. նշված են պետական գաղտնիքի շրջանակները՝ գործունեության այն քնազավառները, որոնցում դրանք կարող են տեղ գտնել, ինչպես նաև այն վճար, որը կարող է առաջանալ պետական գաղտնիքի տարածումից: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է Հայաստանի Հանրա-

պետության անվտանգության համար հնարավոր ծանր հետևանքների մասին դրույթի ամրագրմանը: Պետական գաղտնիքի սահմանման մեջ ակնհայտ է ևս մեկ հատկանիշ, այն է՝ պետական գաղտնիքի պաշտպանության պարտականությունը կրում է պետությունը:

Դժվար չէ նկատել նաև, որ ՀՀ պետական գաղտնիքի սահմանման մեջ ուղղակի նշում չկա հակառակորդի մասին (ումից կամ ինչից պաշտպանվում է պետական գաղտնիքը), ինչը որպես պետական գաղտնիքի հատկանիշ առկա է վերոբերյալ մողելում: Կարծում ենք, այնուամենայնիվ, այն, թեկուզ անուղղակի ձևով, առկա է նաև ՀՀ պետական գաղտնիքի սահմանման մեջ: Պետք է պարզապես «վերծանել» այն և գալ մի պարզ եզրահանգման՝ օրենսդիրը որպես «հակառակորդ» դիտում է երկրի ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքները (ինչպես արտաքին, այնպես էլ ներքին) կամ դրանք կրողներին:

Ատենախոսության մեջ շրջանառության մեջ է դրվում տեղեկությունների գաղտնագրման մողելավորման գաղափարը: Այդ առնչությամբ լայն անդրադարձներ կատարելով ասպարեզում առկա համաշխարհային փորձին՝ հեղինակը նշում է, որ տարրեր երկրներում գործում են տեղեկությունները պետական գաղտնիքի շարքը դասելու տարբեր հայեցակարգեր (կազմակերպչական ձևեր, մողելներ), որոնք, նման լինելով շատ կողմերով, ունեն նաև սկզբունքային առանձնահատկություններ: Համադրելով և վերլուծելով դրանք՝ կարելի է խոսել տեղեկությունները պետական գաղտնիքի շարքը դասելու երկու հիմնական մողելների մասին:

1. ցանկավորման մողել - տեղեկություններ, որոնք պետական գաղտնիքի շարքն են դասվում ըստ հաստատված ցանկերի,

2. անձնավորման մողել - տեղեկություններ, որոնք պետական գաղտնիքի շարքն են դասվում ըստ լիազորված անձերի:

Անդրադառնալով Հայաստանում գործող ցանկավորման մողելին՝ հեղինակն առանձնացնում է դրա երեք մակարդակներ:

ա) պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկ, որն արտացոլված է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում (առաջին մակարդակ),

բ) պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկ, որը մշակում և հաստատում է կառավարությունը (համապետական ցանկ, երկրորդ մակարդակ),

գ) պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկ, որը կազմվում է ըստ գերատեսչական պատկանելության (գերատեսչական ցանկ, երրորդ մակարդակ):

Հեղինակը կատարում է հիշյալ մակարդակների մանրամասն վերլուծություններ՝ հանգելով հետևյալ հետևողանը. Հայաստանի Հանրապետությունում գործում է պետական գաղտնիքի ձևավորման (տեղեկությունները պետական գաղտնիքի շարքը դասելու) ցանկավորման մողելը՝ եռաստիճան ցանկավորման համակարգով՝ անձնավորման մողելի որոշակի տարրերով, ինչն անհրաժեշտաբար պահանջում է ցանկերի խիստ համապատասխանություն միմյանց և օրենսդրության այլ դրույթների: Այս հանգամանքն իր անհրաժեշտ իրավական լուծումները չի ստացել ՀՀ օրենսդրությամբ:

Երկրորդ գլխի 3-րդ պարագրաֆում քննության է առնվում պետական գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանության կառուցակարգը: Թեմայով պայմանա-

վորփած՝ վերլուծվում և գնահատվում են «պետական գաղտնիքի պաշտպանություն» հասկացության սահմանման իրավական հատկանիշները՝ դրանք համադրելով ընդհանրապես տեղեկատվության պաշտպանության սահմանման հատկանիշների հետ, տրվում է «պետական գաղտնիքի պաշտպանություն» հասկացության նոր սահմանումը հեղինակի կողմից (տես պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներում), արվում են այլ հետևողություններ՝

- պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպումն իրականացվում է պետության բարձրագույն իշխանության մարմինների կողմից: Այս առումով անհրաժեշտ է օրենսդրության վերականգնել ՀՀ Ազգային ժողովի՝ պետական գաղտնիքի պաշտպանության գործում օրենսդրական կարգավորում իրականացնելու լիազորությունը,

- պետական գաղտնիքի պաշտպանության մարմինների համակարգում համապետական մասնագիտացված մարմնի բացակայության բացը լրացնելու համար ՀՀ ազգային անվտանգության ծառայության մարմիններն օժտել կազմակերպչական ու մասնագիտական օժանդակության բնույթի կոնկրետ լիազորություններով և ազգային անվտանգության ծառայությունը դիտել որպես այդպիսի մարմնի,

- անհրաժեշտ է հստակեցնել պետական գաղտնիքին առնչվելու կարգը՝ առանձին կատեգորիայի (պաշտոնատար) անձանց համար օրենքով պետական գաղտնիքին առնչվելու հատուկ կարգ սահմանելու միջոցով:

Սուածադրվում և վերլուծվում են պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպման խնդիրները՝ դրանց տալով նոր մեկնաբանություն: Համադրելով և պարզաբանելով «կազմակերպում» և «կառավարում» հասկացությունները՝ հեղինակն առաջարկում է «պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպում» օրենսդրական ձևակերպման մեջ «կազմակերպում» եզրույթը դիտարկել որպես կառավարման գործառույթ, պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպումն էլ՝ որպես պետական գաղտնիքի պաշտպանության կառավարում, այսինքն՝ այն դիտել որպես ազգային անվտանգության ոլորտում պետական կառավարման բաղկացուցիչ մաս:

Սուածարկվում են օրենսդրական մի շարք փոփոխություններ՝ ուղղված պետական մարմինների և բուն հիմնարկ-ձեռնարկությունների կողմից պետական գաղտնիքի պաշտպանության ամրապնդմանը, մեկնաբանվում են պետական գաղտնիքին առնչվելու բույլտվության իրավական դրույթները:

**Երկրորդ գլխի 4-րդ պարագագֆում** բննության են առնվում պետական գաղտնիքի ոլորտում հակաիրավական գործողությունների համար սահմանված պատասխանատվությանն առնչվող հարցեր: Մասնամասն վերլուծվում են նման գործողությունների դեպքում քրեական, վարչական և կարգապահական պատասխանատվության իրավական հիմքերը, արվում են ոլորտի բարելավմանն ուղղված կոնկրետ առաջարկություններ: Մասնավորապես՝ հեղինակի կողմից մատնանշվում են պետական գաղտնիքի հետ վարվելու կանոնների որոշ խախտումներ, որոնց համար ՀՀ օրենսդրությամբ անհրաժեշտ է սահմանվել վարչական պատասխանատվություն.

1. պետական գաղտնիքի հետ վարվելու կանոնների խախտումը, որը կարող էր հանգեցնել դրանց իրապարակման կամ կորստի,

2. պետական գաղտնիքի պահպանության նկատմամբ հսկողություն իրականացնող պետական մարմնի պաշտոնատար անձի գործողություններին խոչընդոտելը,

3. պետական գաղտնիքի պահպանության նկատմամբ հսկողություն իրականացնող պետական մարմնի հանձնարարականները չկատարելը,

4. պետական գաղտնիքի օգտագործմամբ աշխատանքներ կատարելը համապատասխան պետական մարմնի կողմից չարտոնված տեխնիկական միջոցներով (համակարգչային տեխնիկայով):

Մեկնարանելով ասվածը՝ հեղինակը պարզաբանում է.

-Նշված իրավախախտումների տեսակային օրյեկտ պետք է դիտել տեղեկատվության շրջանառության ընթացքում ձևավորվող հասարակական հարաբերությունները, իսկ անմիջական օրյեկտ՝ պետական գաղտնիքի պաշտպանությանն ուղղված գործունեության կապակցությամբ ծագող հարաբերությունները:

-Իրավախախտումների սուբյեկտ կարող են հանդիսանալ այն անձինք (այդ թվում՝ պաշտոնատար), որոնք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ի պաշտոնե պարտավոր են կամ պարտավորություն են ստանձնել պահպանել և պաշտպանել պետական գաղտնիքը:

-Օրյեկտիվ կողմից նշված իրավախախտումները դրսևորվում են պետական և ծառայողական գաղտնիքի մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ պետական գաղտնիքի պահպանման կանոնների խախտումով, որը կարող է կատարվել ինչպես գործողությամբ, այնպես էլ անգործությամբ:

-Սուբյեկտիվ կողմից նման արարքներն իրենց բնույթով կարող են կատարվել ինչպես դիտավորությամբ, այնպես էլ անզուշությամբ:

Պետական գաղտնիքի հետ վարվելու կանոնների առանձին խախտումների համար վարչական պատասխանատվության սահմանմամբ, հեղինակի համոզմամբ, կրարձրանա նաև այդ կանոնների պահպանության նկատմամբ հսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց գործունեության արդյունավետությունը: Ինչպես մեկնարանել, օրինակ, այն փաստը, որ նմանատիպ խախտում հայտնաբերելու դեպքում նշված պաշտոնատար անձինք ներկայիս օրենսդրությամբ չունեն օպերատիվ արձագանքման արդյունավետ միջոց, ինչպիսին կարող է հանդիսանալ վարչական պատասխանատվությանը: Հեղինակի կարծիքով վարչական պատասխանատվության սահմանումը դրականորեն կանդրադառնա պետական գաղտնիքի հետ վարվելու կանոնների խախտման համար պատասխանատվության համակարգի ամբողջականացմանը:

Ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտության արդյունքները թույլ են տվել հանգել որոշակի հետևողությունների և ձևակերպել պետական գաղտնիքի սահմանակարգի ձևավորման ու զարգացման, ինչպես նաև իրավական կարգավորման հիմնախնդիրների վերաբերյալ կոնկրետ եզրահանգումներ ու առաջարկություններ, որոնք, տեղ գտնելով ատենախոսության «Եզրակացություն» բաժնում, ներկայացվում են ստորև՝ աշխատանքի կառուցվածքին համապատասխան:

Պետական գաղտնիքի պատմական նախադրյալների ուսումնասիրումը ցույց է տվել, որ հայ իրականության մեջ պետական գաղտնիքը գոյություն է ունեցել հայոց հնագույն պետության առաջացման ժամանակաշրջանից և ծառայել է պետության՝ որպես սոցիալական համակարգի անվտանգության ապահովման խնդիրներին, ի սկզբանե դիտվել որպես տեղեկություն, հիմնականում՝ ռազմական բնույթի, պաշտպանվել պետական ապարատի կողմից և եղել պետական գործունեության ոլորտ: Այդուհան-

դերձ՝ պետական գաղտնիքի պաշտպանությունը չի կրել համակարգային բնույթ և, ունենալով առավելապես ռազմական նշանակություն, ենթարկվել է պատերազմի օրենք-ներին: Պետական գաղտնիքի պատմական նախադրյալները, այդ ոլորտում կուտակված հայրենական փորձը կարևոր ազդեցություն են ունեցել հայ իրականության մեջ պետական գաղտնիքի հասարակական ընկալումների զարգացման և որպես արդյունք՝ ՀՀ պետական գաղտնիքի իրավական սահմանակարգի ձևավորման վրա:

Պետական գաղտնիքի Էռությունը կայանում է նրանում, որ այն տեղեկության տարատեսակ է, տեղեկություն, որը հանված է ազատ շրջանառությունից՝ երկրի ազգային անվտանգության ապահովման նկատառումներով, և նման տեղեկությունների պաշտպանությունը, որանց տարածումը կանխելու նպատակով, իրականացնում է պետությունը: Պետական գաղտնիքը, որպես իրավական երևույթ, հանդիսանում է տեղեկատվական հասարակական հարաբերությունների օբյեկտ:

Ազգային անվտանգության ապահովման համատերասում պետական գաղտնիքի դիտարկումը բույլ է տվել հանգել որոշակի եզրահանգումների.

- պետական գաղտնիքի սահմանակարգն ազգային անվտանգության ապահովման կարևոր բաղկացուցիչն է, ուստի դրա կատարելագործման համար անհրաժեշտ է կատարելագործել ազգային անվտանգության, տեղեկատվական անվտանգության վերաբերյալ օրենսդրությունն ընդհանրապես: Մասնավորապես՝ ընդունել «Ազգային անվտանգության մասին» ՀՀ օրենք, «ազգային անվտանգություն» հասկացությունը սահմանել այդ իրավական ակտով,

- պետական գաղտնիքը պետության իրավունքն է, այդ իրավունքի իրագործումը՝ պետության պարտականությունը իր քաղաքացիների, հասարակության հանդեպ,

- վերոնշյալ իրողություններին հանրության լայն ընդգրկումը պետական գաղտնիքի պաշտպանության հուսալի միջոցներից է, որի արդյունավետ գործադրման նպատակով անհրաժեշտ է թեմաներ նախատեսել տեղեկատվական անվտանգության գծով կազմակերպող դաշնաքանություն, հասնել պետական գաղտնիքի ոլորտում իշխանության համապատասխան մարմինների և պաշտոնատար անձանց իրավագիտակցության մակարդակի բարձրացման, մարդկային գործոնի դերի ու նշանակության ուժեղացման:

Սույն աշխատանքի շրջանակներում պետական և ծառայողական գաղտնիքի հարաբերակցության խնդրի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ պետական և ծառայողական գաղտնիքները, որքան էլ լինեն փոխառակացված, առանձին սահմանակարգեր են և նպատակահարմար չեն, որ միավորված լինեն մեկ օրենքում և դիտարկվեն որպես գաղտնիքի մեկ ընդհանուր կատեգորիա՝ պետական և ծառայողական գաղտնիք, ինչպես գործող օրենքի վերնագրում: Եթե, ելնելով ազգային անվտանգության, պետության, հասարակության և քաղաքացիների շահերից, ծառայողական գաղտնիք կազմող այս կամ այն տեղեկությունը դասվում է պետական գաղտնիք կազմող տեղեկությունների շարքը, այսպես ասած՝ «պետականացվում է», դառնում պետության սեփականությունը, ապա այն այլևս դադարում է ծառայողական գաղտնիք լինելուց և համարվում է պետական գաղտնիք: «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը անհարկ շրջանցում է այս հանգամանքը, ինչը հղի է պետական և ծառայողական գաղտնիքների սահմանագատումն անտեսելու, դրանք համահարթելու վտանգով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ իրավիճակը շտկելու համար նպատակահարմաք է ընդունել «Պետական գաղտնիքի մասին» և «Ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ առանձին օրենքներ և դրանցում սահմանել նշված տեսակի գաղտնի տեղեկությունների պահպանության և պաշտպանության առանձին իրավական ռեժիմներ:

Թեկնածուական աշխատանքի շրջանակներում պետական գաղտնիքի իրավական սահմանակարգի տեսահրավական կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում պետական գաղտնիքի սահմանակարգը, որպես ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ, բխելով ՀՀ Սահմանադրությունից, միջազգային իրավունքի հանրահայտ սկզբունքներից, իր իրավական բովանդակությամբ կրում է օրինական (լեզիտիմ) բնույթը: Պետական գաղտնիքի սահմանակարգն ունի միջազգության, ընդհանուր իրավական բնույթը, որը ներառում է իրավունքի տարրեր ճյուղերի նորմեր, այդ թվում՝ սահմանադրական, վարչական, աշխատանքային, ֆինանսական իրավունքի:

Պետական գաղտնիքի ձևավորման կառուցակարգում առաջնային նշանակություն ունի «պետական գաղտնիք» հասկացությունը, որի ՀՀ օրենսդրությամբ տրված սահմանումն օժտված է իրավական անհրաժեշտ հատկանիշներով և բավարար է կառուցակարգի ձևավորման համար:

ՀՀ-ում գործում է պետական գաղտնիքի ձևավորման (տեղեկությունները պետական գաղտնիքի շարքը դասելու) ցանկավորման մոդելը՝ եռաստիճան ցանկավորման համակարգով՝ անձնավորման մոդելի որոշակի տարրերով, ինչն անհրաժեշտաբար պահանջում է ցանկերի խիստ համապատասխանություն միմյանց և օրենսդրության այլ դրույթների: Այս հանգամանքն իր անհրաժեշտ իրավական լուծումները չի ստացել ՀՀ օրենսդրությամբ: Ուստի անհրաժեշտ ենք համարում «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում ամրագրել դրույթ այն մասին, որ կառավարության և գերատեսչությունների կողմից պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկերը մշակելիս և հաստատելիս պետք է հիմք ընդունել և առաջնորդվել օրենքի 9-րդ՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու ենթակա տեղեկությունները» հոդվածով: Պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների՝ կառավարության կողմից հաստատված համապետական ցանկը պետական գաղտնիքի մասին օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու նպատակով առաջարկվում է նաև վերանայել այն՝ ցանկում ընդգրկելով միայն այն տեղեկությունները, որոնց տարածումը կարող է կառավարության կողմից սահմանված չափանիշներով իրապես ծանր հետևանքներ առաջացնել պետության անվտանգության համար:

Պետական գաղտնիքի ձևավորման կառուցակարգում կարևորելով նաև տեղեկությունները պետական գաղտնիքի շարքը դասելու լիազորության խնդիրը՝ կարծում ենք, որ այն պետական մարմիններին վերապահելու ներկայումս գործող կարգը թերի է, տարրներցումների տեղիք է տալիս և ենթակա է փոփոխության: Անհրաժեշտ է օրենսդրութեն հստակ տարանջատել տեղեկությունները պետական գաղտնիքի շարքը դասելու լիազորությունը՝ այն վերապահելով պետական մարմինների պաշտոնատար անձանց (դեկավարներին) և այդ տեղեկությունները տնօրինելու լիազորությունը, որը պետք է վերապահվի պետական մարմիններին: Դրանով փորձ կկատարվի մեր իրավական համակարգում ներդնել տեղեկությունների գաղտնագրման անձնավորման մոդելի կարևոր

առավելություններից մեկը՝ պաշտոնատար անձանց բարձր անձնական պատասխանատվությունը տեղեկությունները պետական գաղտնիքի շարքը դասելու հարցում:

Պետական գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանության կառուցակարգի ուսումնասիրությունը թույլ է տվել կատարել հետևյալ եզրահանգումները.

- «Պետական գաղտնիքի պաշտպանություն» հասկացության օրենսդրական սահմանումը թերի է, այն անհրաժեշտ է սահմանել հետևյալ կերպ. «Պետական գաղտնիքի պաշտպանությունը պետության կողմից մշտապես իրականացվող, օրենսդրությամբ նախատեսված իրավական, կազմակերպչական, ինժեներատեխնիկական և այլ անհրաժեշտ միջոցների ու մեթոդների համակարգված կիրառումն է՝ ուղղված գաղտնի տեղեկությունների տիրապետման և տնօրինման պետության իրավունքի պաշտպանությանն ու այդ տեղեկությունների անվտանգության ապահովմանը»,

- պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպումն իրականացվում է պետության բարձրագույն իշխանության մարմինների կողմից: Այս հանգամանքը, որքան էլ կարևոր, այդուհանդերձ իր անհրաժեշտ ամրագրումը չի ստացել պետական գաղտնիքի մասին ՀՀ օրենսդրության մեջ: Փոխարենը՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպումը դիտվում է առանձին պետական մարմինների, ծեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարների գործունեության հարթության մեջ, ինչը նսեմացնում է պետական գաղտնիքի պաշտպանության կարևորությունն ընդհանրապես: Այս նկատառումով անհրաժեշտ է օրենսդրորեն վերականգնել ՀՀ Ազգային ժողովի՝ պետական գաղտնիքի պաշտպանության գործում օրենսդրական կարգավորում իրականացնելու լիազորությունը, ամրագրել դրույթ, որի համաձայն պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպումը պետության բարձրագույն իշխանության մարմինների գործառույթն է,

- պետական գաղտնիքի պաշտպանությունը կազմակերպող և իրականացնող մարմինների համակարգում առանձին համապետական մասնագիտացված մարմնի բացակայության բացը լրացնելու համար անհրաժեշտ է ՀՀ ազգային անվտանգության ծառայության մարմիններն օժտել կազմակերպչական ու մասնագիտական օժանդակության բնույթի կոնկրետ լիազորություններով և օրենքով ամրագրել ԱԱԾ-ի այդ կարգավիճակը,

- անհրաժեշտ է հստակեցնել պետական գաղտնիքին առնչվելու կարգը՝ առանձին կատեգորիայի (պաշտոնատար) անձանց համար օրենքով պետական գաղտնիքին առնչվելու հասուկ կարգ սահմանելու միջոցով: Մասնավորապես, խոսքը վերաբերում է ԱԺ պատգամավորներին, դատավորներին, դատախազներին, քննիչներին, հետաքննության մարմինների աշխատակիցներին, ինչպես նաև կոնկրետ քրեական գործերով հանդես եկող պաշտպաններին: Վերջիններիս համար, ինչպես ցույց են տալիս հետազոտության արդյունքները, պետական գաղտնիքին առնչվելու թույլտվության ընդհանուր կարգը (կամավորության սկզբունքով, նախնական ստուգման դրական արդյունքների հիման վրա և այլն) պարզապես գործել չեն կարող, մինչդեռ այլ կարգ նրանց համար օրենսդրորեն սահմանված չէ.

- անհրաժեշտ է նաև վերանայել պետական գաղտնիքի հետ առնչվելու մերժման հիմքերը, որոնք սահմանված են «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ

օրենքի հոդված 21-ում: Մասնավորապես. անձի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումն անհրաժեշտ է դիտել պետական գաղտնիքին առնչվելու ոչ թե մերժման, այլ կասեցման հիմք, «առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստ» հնացած արտահայտությունը փոխարինել «կատարել է առանձնապես վտանգավոր ռեցիդիվ» բառերով, կոնկրետացնել «ՀՀ անվտանգությանը սպառնացող գործողություններ» արտահայտության բովանդակությունը:

Ինչ վերաբերում է պետական գաղտնիքի ոլորտում հակաբրավական գործողությունների համար պատասխանատվությանը, ապա դրա վերաբերյալ իրավական դրույթների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Հայաստանի Հանրապետությունում պետական գաղտնիքների հետ կապված հանցագործությունների դեմ պայքարի ամբողջական համակարգ է ձևավորված, որն ընդգրկում է ինչպես պետական գաղտնիքի հետ կապված հանցավոր գործողություններն ամբողջապես, այնպես էլ դրանք կատարող հնարավոր բոլոր սուբյեկտներին, ինչը հնարավորություն է տալիս ոլորտում իրականացնել արդյունավետ քրեաբրավական քաղաքականություն: Միևնույն ժամանակ ՀՀ օրենսդրությամբ ստեղծված չեն բավարար հիմքեր՝ սահմանելու համար կարգապահական և վարչական պատասխանատվություն պետական գաղտնիքի հետ վարվելու կանոնների այն խախտումների համար, որոնք չեն առաջացրել դրա հրապարակում կամ կորուստ: Մասնավորապես առաջարկվում է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրում պատասխանատվություն սահմանել այնպիսի զանցանքների համար, ինչպիսիք են՝

- պետական գաղտնիքի հետ վարվելու կանոնների խախտումը, որը կարող էր հանգեցնել դրանց հրապարակման կամ կորստի,

- պետական գաղտնիքի պահպանության նկատմամբ վերահսկողություն իրականացնող պետական մարմնի պաշտոնատար անձի գործողություններին խոչնդրուելը,

- պետական գաղտնիքի պահպանության նկատմամբ վերահսկողություն իրականացնող պետական մարմնի հանձնարարականները չկատարելու,

- պետական գաղտնիքի օգտագործմամբ աշխատանքներ կատարելը համապատասխան պետական մարմնի կողմից չարտոնված տեխնիկական միջոցներով (համակարգչային տեխնիկայով):

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Հայաստանի Հանրապետությունում ծառայողական գաղտնիքի իրավական ինստիտուտի մի քանի հարցերի մասին, «Պետություն և իրավունք», Եր. 2009, № 3(45), էջ 100-106,

3. Հայաստանում պետական գաղտնիքի սահմանակարգի զարգացումը պատմական հոլովույթում, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, Եր. 2010, № 4(66), էջ 113-121 (համահետ. Ա. Քինակցյան)

4. Պետական գաղտնիքի պաշտպանությունը որպես ՀՀ տեղեկատվական անվտանգության բաղադրիչ, «Պետություն և իրավունք», Եր. 2011, № 3(45), էջ 48-55,

5. Պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպման խնդիրները Հայաստանի Հանրապետությունում, «Արդարադատություն», Եր. 2011, № 4(15), էջ 11-16:

## ГОР НОРИКОВИЧ ЕНГИБАРЯН

# ПРОБЛЕМЫ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ ГОСУДАРСТВЕННОЙ ТАЙНЫ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

## РЕЗЮМЕ

Государственная тайна один из важнейших атрибутов независимого государства, необходимый элемент, признак суверенного государства. Наличие государственной тайны свидетельствует о том, что государство действует как в интересах своих граждан и общества, так и собственной безопасности. А без сильного, наделенного полноценным суверенным правом государства не могут быть обеспечены ни права и свободы граждан, ни интересы общества.

К сожалению до настоящего времени в Республике Армения институт государственной тайны, а также проблемы ее охраны и защиты не становились предметом должного научного исследования.

В диссертационном исследовании предпринята попытка анализа наиболее актуальных теоретических и практических вопросов правового регулирования государственной тайны РА в контексте безопасности и иных жизненно важных интересов личности, общества и государства. В работе, в частности, исследовано нынешнее состояние правового регулирования общественных отношений, возникающих при отнесении сведений к государственной тайне, оборота и защиты этих сведений, выявлены и обоснованы пути дальнейшего совершенствования законодательства о государственной тайне РА. В этой связи изучены теоретико-правовые основы структуры института государственной тайны, проведен правовой анализ механизмов и критериев отнесения сведений к государственной тайне, законодательного ограничения его оборота, а также защиты. Исследованы также вопросы ответственности за неправомерные действия в сфере защиты государственной тайны.

В своей работе автор, в частности, обращает внимание на то обстоятельство, что закон РА «О государственной и служебной тайне» действует уже свыше десятилетия, и за этот период произошло множество изменений как в государственной, так и общественной жизни, выявились новые реалии в области охраны и защиты государственной тайны. Но сам закон не претерпел сколь-нибудь существенных изменений. Однако это вовсе не означает, что в указанном законе нет недостатков и что он полностью соответствует новым общественным и правовым реалиям, а также международным стандартам, которые действуют в государствах с развитой системой охраны и защиты тайн. Автором детально проанализированы соответствующие положения Закона, и на основе этого представлены предложения по их совершенствованию. Кроме того, исследование соотношения государственной и служебной тайны показало, что, несмотря на то, что эти понятия глубоко взаимосвязаны, они должны рассматриваться в качестве отдельных правовых институтов и их искусственное объединение в рамках единого закона и представление в качестве единой категории (как это сделано в названии закона «О государственной и служебной тайне») необосновано. В связи с этим автор предлагает принять два отдельных закона:

«О государственной тайне» и «О служебной тайне», предусмотрев в каждом из них самостоятельные правовые режимы их охраны.

В диссертационном исследовании на основании анализа практики некоторых государств автор высказал идею о необходимости моделирования процесса отнесения сведений к государственной тайне в Республике Армения и выделил две возможные модели: смысл первой заключается в том, что сведения относятся к государственной тайне согласно специально утвержденным перечням, а вторая модель предусматривает отнесение сведений к государственной тайне уполномоченными должностными лицами по их усмотрению. На основе оценки с точки зрения существующих критерииев автор пришел к выводу о том, что действующий в настоящее время в Республике Армения порядок в целом соответствует первой модели, однако имеются также некоторые признаки второй модели. В связи с этим автором выделены и изучены три уровня перечневой системы отнесения сведений к государственной тайне. На основе сравнительного анализа указанных уровней автором выявлено множество недостатков и несоответствий между ними, представлены конкретные предложения по их устранению.

В диссертационной работе государственная тайна рассматривается в качестве разновидности сведений, а конкретно – сведений с ограниченным доступом, являющихся важной составляющей национальной безопасности. Государственная тайна является также важным стратегическим ресурсом государства и нуждается в особой защите. В связи с этим автор критически относится к нынешнему определению понятия «защита государственной тайны», указанному в законе РА «О государственной и служебной тайне», выявляет его недостатки и предлагает новое определение. Рассматривая защиту государственной тайны как основную задачу всего законодательства в данной области, а пути ее совершенствования основной целью своей диссертационной работы, автор обращает особое внимание на вопросы организации защиты и доступа к государственной тайне. Организация защиты государственной тайны, как в других странах, так и в Республике Армения, фактически осуществляется высшими органами государственной власти, о чем свидетельствует, в частности, содержание норм законодательства РА о государственной тайне. Однако закон «О государственной и служебной тайне» обходя это обстоятельство, организацию защиты государственной тайны рассматривает как деятельность руководителей отдельных ведомств, что сужает значение этой деятельности как функции государства.

Закон также обходит то обстоятельство, что предусмотренный общий порядок доступа к государственной тайне в практике неприменим как к отдельным должностным лицам, так и, в частности, к защитникам по конкретным уголовным делам. В связи с этим автором предложен особый порядок допуска указанных лиц.

Исходя из вышеизложенного, в диссертационном исследовании обоснована необходимость рассматривать закон РА «О государственной тайне» (в нынешней редакции закон РА «О государственной и служебной тайне») рамочным по отношению к другим законам в указанной сфере. Это, на взгляд автора, важно особенно для разработки и реализации единой правовой политики в сфере защиты государственной тайны.

На основе исследований правового и практического характера автором предложены также основные пути дальнейшего совершенствования других положений законодательства в данной области.

**Gor N. Yngibaryan**

## **The problems of juridical regulation of the State secret in the RA.**

### **SUMMARY**

State secret is one of the most important features of state independency, one of the essential elements of arbitrary State system. To have State secret means to have State which thinks and acts for the sake of its independence, hence, for securing vital interests of its citizens and society. The above mentioned concerns the Republic of Armenia as well.

The author presents thesis is trying to analyze the problems of juridical regulation of the State secret in the Republic of Armenia from the theoretical and scientific practical points of views observing them in state – society – individual interaction, a circumstance that obtains primary significance in the formation of democratic state.

This thesis has analyzed, evaluated the juridical regulation of state-society interrelation in the field of information ciphering, the current state of its circulation and protection and has outlined the ways of further improvement of the legislation on State secret in the Republic of Armenia. In this context we have investigated the theoretical juridical bases of state secret institution structure , have made a juridical analysis of the criteria of information ciphering, their legislative restrictions, secret information protection, problems concerning establishment of sanctions for breaking the rules in the field of State secret.

The following observation is of great importance in the thesis: the RA Law “On state and official secret” has been functioning for about one and half decades. During this period of time serious changes have taken place both in state and social life, new realities have occurred, but the law itself hasn’t undergone any significant changes. This circumstance doesn’t testify at all about the fact that the mentioned law doesn’t have any shortcomings and fully corresponds to the existing new social and juridical realities as well as to the international criteria which function in all the progressive countries of the world.

The investigation of the State and Official secret correlation within the frames of this work has shown that no matter how correlated the State and Official secrets are they are independent institution and it is not reasonable to combine them in one law and consider as one general category of secret: State and official secret as it is in the existing law title. Pursuant to the above mentioned, to correct the situation it’s expedient to adopt separate laws of Republic of Armenia and set up separate juridical regimes of securing and protecting the mentioned type of secret information.

This research thesis has tended to meet the lack in the juridical field of the Republic concerning the State secret. That is, the RA Law “On state and official secret” is not fully studied as an essential law, by its nature, among other functioning laws against normative juridical acts. This investigation pursues its aim to study the State secret on one general juridical plane which is very important in social relations from the point of view of working out and realizing common juridical policy.

In this observation the author parallels the legislation of State secret in the Armenian Republic and in the countries of Independent Corporation, refers to the world global experience in the field of State secret.

In the observation the author circulates the idea of the model of the State secret taking into account the world global experience. The author separates two models. The first model is when the information is considered to be a State secret according to the confirmed list, the second model includes the information which is among the State secret due to authorized people.

The researcher analyzes them both properly and concludes that in the Republic of Armenia the first model is common which includes separate elements from the second model.

According to the above mentioned there are three levels to range the State secret:

A. A list of information ranging in the State secret which is reflected according to the spheres in the RA Law "On state and official secret" [the first level].

B. A list of information ranging in the State secret which is developed, processed and confirmed by the government [Panstate list, the second level].

C. A list of information ranging in the State secret which is made according to the instructive belonging [the third level].

There are many shortcomings and contrasts listed and the author suggests ways to avoid them.

In the observation the State secret is watched as a variety of information, just information which is defined in the law taken out of the free circulation. It is an important part of national security and it is a national source which needs special protection. The author gives a new definition of "Defence of State Secret", except criminal responsibility for breaches. In this observation the author analyzes the RA Law "On State and official secret", comments and makes conclusions.

As a result the author for the first time in Armenian jurisprudence circulates the idea of modeling the State secret information and reflects the contradictions and omissions of the in RA Law "On state and official secret" in details.

The author establishes the concepts of the protection and defence of the State secret in a new way.